# 68. ԷՐԿՈՒ ԳՅՈՂԵՐ

Մարթմ ուր վերա-գյո̈խ խորոտ կղրադտի, կէրթա քյարբար չկարի փետ ծախող դյուքյանմ, Էդ գյող մարթ որ կնա̈ցիր էր չկարի փետն առնելու, խարիր կոտուշանոց չկարի փետին քյսան կոտուշ կուտա, քսան կոտուշանոց փետին՝ խինգյ կոտուշ կուտա:

Դյուքյնդար մէ խատ քսան կոտուշանոց չկարի փետ մարթու ուզածի պես կուտա՝ խինգյ կոտուշ:

Էդ մարթ ուրուշ քյսան կոտուշանոց չկարի փետմ կգյողնա կխճի ուր թիվի մեչ, դյուքյնդար կտիսնա:

Էդ գյո̈ղ մարթ կզատանա, քիչմ կէրթա̈, դյուքյընդա̈ր կկանչի. կասի. - Ախպե՛ր, մութն ի, կայնի դյուքյա̈ն կոցեմ. Էրթա̈նքյ մեյ տեղ մեր տուն կիշերս կաց մեզ մսա̈ֆր:

Կասի. - Չէ՛, չեմ իգյա̈:

Կասի. - Խնդրե՛մ, Էրթա̈նքյ:

Աղա̈շա̈նքյ կինի, կառնի կէրթա̈: Կէրթա̈ն տուն, խաց-մաց կուտեն, խացեն սորա կքա̈շլայեն չկարա շինել, դյուքյնդա̈ր ծեռ կուտա ջեռք, կասի. - Վա՛յ, իմ մոտեն կնա̈ց. չկարի փետ մնաց դյուքյա̈ն. Էդա փետ. որ տյու ընցուցիր քյո թև, մե հա տուր չկարեն զա̈նեմ վերեն, նա̈ֆա̈մ Էրկու քյա̈շեմ, տամ:

Մարթ կամչնա. - Չէ-մե, - կասի:

Դյուքյնդա̈ր կասի. - Մա՛մչնա, խան տյուս տուր, ես էլ գյո̈ղ եմ, քյե պիրիր եմ, որ գյուղութեն սովորցուցեմ, ես թորկիր իմ, ամա, քյո խաթրի խամար մեկ Էրկու օր պիտի գյուղութեն անեմ, որ տյու սովրես:

Մարթ կխանի, գյո̈ղցած չկարի փետ թա̈սլիմ կա̈նի:

Ուրենց չկարեն կքյա̈շեն, դյուքյնդա̈ր կասի. - Էսօր քյա̈մա̈լ ի՞նչ ի, որ տյու թմախ արիր:

Կիշերն կոխեց, դյուքյնդա̈րն ասաց. - Դե՛, Էյի Էրթա̈նքյ:

Կնա̈ցին մեյ զա̈նգյին մարթում տուն կմտնեն: Կացեն կպսնան. քիչմ ոսկի կխանեն, կացի տոռ կկոցին, կացի կուշտ մե հա նխշուն սնդուկմ կէլնի, սնդուկն էլ կպսնա̈ն. դյուքյնդա̈ր Էդ խանած փա̈րեն ճեռկ-ճեռկ խարիր ոսկի մեկ տոպրկի մեչ, խինգյ խարիր ոսկի մեկ տոպրկի մեչ, ըսհա բիթյուն տոպրկներ ոսկիքյ կլցի խամրով, նշաններ կանի՝ կարմիր, կանաչ, տեղին թելերով, տոպրկներաց պերյհտեր կկապի. կտնի մեչ նխշուն սնդկին, տոռ կկոցի:

Ինգյեր կասի. - Ի՞նչ կանես, տանինքյ խետ:

Դյուքյնդճր կասի. - Տյու ծեն մի խանի, քյելի էրթանքյ: Կուգյան: Առատուն կէրթճն դյուքյան կպճննճն, քիչմ սորա, ճամալ կառնի կէրթճ էն տան տիրոչ դյուքյճն, կասի. - Ախպե՛ր, նշանապճնմ տուր էսա ճամալ ծեր տնեն իմ սնդուկ պիրի:

Տանտեր կասի. - Տյու ծուճր, ի՞նչ սնդուկ կա մո զիկ, սութ կասես ի՞նչ, ջաճնվի՛, կնա՛:

Մարթ կէրթա, վճզեվճզ փոլիսին խճբճր կուտա, թե այսինչ մարթու տուն ամանաթ սնդուկմ եմ դրե, մկա չի տա, շուտ էրթուանքյ էնոր տուն պռնենքյ, չէլնի իմ սնդուկ փախցուցի:

Փոլիս կուգյճ տանտեր կառնի, կպիրի. - Էրթճնքյ էսա մարթու սնդուկ թճալիմ արա, թող տանի:

Տանտեր կասի. - Ջա՛նմ, էն մարթուն մո զիկ սնդուկ չկա, պճն չկա, սութ կասի:

Գյխղն փոլիսին կասի. - Էրթճնքյ իմ սնդկի մեչի պսւներաց նշայտեր ասեմ՝ պճց, թե որ դողրի եի, իմ սնդուկ թճալիմ արա զիկ, թե որ սութ ի, ես իմ շճզեն քյճշեմ:

Համալ կէօրեռխկեն սնդուկ մարթու տնեն կխանեն տյուս:

Փոլիս կասի. - Դե՛, ի՞նչ կա մեչ քյո սնդկին, ասա:

Մարթն կասի. - Դեղին թեյով տոպրակ՝ էսա կճնդճր ոսկի կա ինե, կարմիր թեյով՝ էսա կճնդճր: Հասլի սնդկի մեչի էլճծներաց մեկիկ-մեկիկ նշայտեր կասի, նոր փոլիս սնդուկ պճնճլ կուտա, կտիսնա, որ մարթու ասած դողրի ի, սնդուկ թճալիմ կանի գյխղուն:

Սնդուկ կառնի, կպիրի տուն, ինզյրոչ կասի. - Տեսա՞ր, ըսճա պատվով գյխղութեն կանեն: Կա՛ց, էսա կիշերն էլ էրթճնքյ:

Էն կիշերն էլ կէրթճն զճնգյին տունմ. կէրթճ կացեն կպճնա, քյիչմ ոսկի կխանի, կպիրի էդա տան խաց ուտելու էօդեն, կպճնճ, լամբեն կկպուցի, թճվլուն կդնեն առճվքյեր, ոսկին կդնեն խե կշտներաց, կբաշլայեն թախկ-թուխկ թճվլու խաղալ: Չեն էրթճ, մախսուս կանեն, որ տերն արթննա:

Տանտեր կճքխի, կուգյճ կտիսնա, որ ուր էօդի մեչ էրկու խոգյի կա, թճվլու կխաղան:

Բոռալեն, ճչալեն կէլնի տյուս, կէրթճ փոլիսին խճբճր կուտա, թե՝ խասի, մեր տուն գյխղ իկե, պռնի:

Փոլիս կէլնի վճզեվճզ կուգյճ, կտիսնա, որ էրկու խոգյի նստիր են կխաղան՝ ոսկին էլ խետ կշտներաց:

Փոլիս կասի. - Տյուքյ գյխ՞ղ եքյ, ի՞նչի եքյ իկե ըստեղ:

Գյողեր կասեն. - Մենքյ գյխղ չենքյ, իրիկուն ինքյ ճրավիրեց իպե, խետ ուր կումար խաղցինքյ, էսա ոսկին բիթյուն ուրն ի, տարվավ մե, մկա կսկծու մե կանի գյխղ:

Փոլիս կավատա, կուտա ըննց ոսկիքյ, կճռնի կուգյճ: Ինզյրոչ դյուքյնդճր կասի. - Տեսա՞ր, գյեո ըսնճ գյողութեն կանեն: Ցերեկս էլ էրթանքյ գյողութեն խերիքյ ի, իգին տամ կնճ:

Էրկուսն ցերեկ կէլնեն կէրթճն լոքանթեն, կէրթճն վեր կնստեն, լոքանթաջուն դյուքյնդճր կասի. - Մե կեր պե ուտենքյ:

- Աղե՛կ, - կասի:

Կպիրի աղեկ ուզած կետեր կուտեն, կուգյա̈ լոքանթաջին թաբախներ առնվներաց կտանի:

Էդ չկարի փետի ծախող գյո̈ղ ուփ ինգյեր գյո̈ղում կթամխի. - Որ փարեն ես տամ՝ տյու կյա̈բյով մ՚անե, տյու տաս՝ ես կյա̈բյով չեմ անե, տիսի ես ի՞նչխ կանեմ:

Կկանչեն լոքանթաջում, կասեն. - Ախպե՛ր, մեր պարտք քյանի՞ էլա̈վ:

Կասի. - Եռսուն կուռուշ:

Կխանի փարեն, կասի. - Ա՛ռ, քյո ճաղ: Էն մեկէլ ինգյեր կասի. - Ես կյա̈բյով չեմ անի, ես կուտամ:

Էն կասի. - Ես կուտամ:

Էն կասի. - Ես կուտամ:

Չյուր լոքանթաջին ա̈չըզ կէլնի. - Դե՛, - կասի, - խերիքյ իլա̈չ անեքյ, մեյդ տվեք փա̈րեն, թողեքյ կնացեք:

Դյուքյնդա̈ր գյո̈ղ լոքանթաջում կասի. - Ախպե՛ր, ես որ տամ փա̈րեն էնոր խաթր կմնա, էն որ տա՝ իմ խաթր կմնա, մեր խաթր, որ մեմեկուց չմնա, պիրենքյ պանմ անենքյ: Պիրենքյ քյո աչքեր կապենքյ, մենքյ մեյ մեկ մեյ պուճախ կայնենքյ, վոփուս որ պռնիցիր, էն թող փա̈րեն տա:

Լոքանթաջին կյա̈բով կանի, կասի. - Դե՛, աղեկ:

Կպիրեն լոքանթաջու աչքեր կայիմ կկապեն, կառնեն մարթու փա̈րի չա̈յմա̈ջեն, կզա̈նեն ընթի տակ կքյելեն:

Լոքանթաջին պուճխներ գյողեր կփտռի: Լոքանթաջու աշկերտ կտիսնա, որ ուսթեն ա̈նգյնցավ, վիրանց չէճնի ցածր, կէլնի վեր, կտիսնա ուսթի աչքյեր կապուկ, կասի. - Ուսթա՛, ի՞նչ կանես տյու էտա աչքերդ կապիր ես:

Աչքեր կպանա, կասի. - Ցա՛, էսա մարթեր ու՞ր ին, դյո̈՞ր կնա̈ցին:

Աշկերտ կասի. - Էնոնքյ վա̈ղուց ին կնա̈ցե:

- Վա՛յ, - կասի, - ծեր խեր գյետռբագյետո էլնի, կերակուր լոռ կերան: Կիրիշկա, որ չա̈յմաջեն էլ տարիր են, կասի. - Վա՛յ, տղա՛ աստված քյո տուն ավիրի, փա̈րի չա̈յմաջեն էլ էն տարե, - կասի, - տղա՛, վազի՛, բա̈յքյի կնդնես:

Աշկերտ կասի. - Տիսնամ էլ չեմ ճանչնա, տյու էսա կա̈նդա̈ր տարվան ուսթա ես, ինչու՞ քյե խափիցին, քյո աչքեր կապիցին:

Էդա դյուքյնդա̈ր իրեքյ օրվա արած գյողութեն թասլիմ կանի, չկարի փետ գյո̈ղցողին կասի. - Կնա՛, բունդան բերա̃ էլ գյողութեն մանե, որ կանես էլ՝ քյչի կյա̈նաճա̈թ մ՚անե:

